

ՀԱՅՀՈՅՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մեծ եւ անբաւելի մեղք է հայհոյանքը եւ աւելի չար՝ քան Ադամէն մինչեւ այսօր բոլոր հեքնուածները, որոնք ժողովով նգովուած են: Մեծագոյն հեքնուածը հայհոյանքն է, որ բոլոր մոռցուած մեղքերն ու չարիքները յիշել կու տայ Աստուծոյ, հրեշտակներուն ու սուրբերուն, կը դողացնէ Աստուծոյ արարածները եւ գարշելի հոտով կը լեցնէ երկիրը:

Հայհոյողները կը փակեն Աստուծոյ ողորմութեան դուռը, թոյլ չեն տար Արարիչին, որ ողորմած աչքով իր արարածները տեսնէ եւ կ'արգիլեն սուրբերուն, որ բարեխօս ըլլան աշխարհին համար: Այս ձեւով քրիստոնէական անունը եւ քրիստոնէութեան աննառ խորհուրդը կը նախատուի եւ ասոր համար է, որ Քրիստոս ըսաւ. «Ան, որ Ս. Հոգիին հայհոյէ, պիտի չներուի անոր ո՛չ այս աշխարհին եւ ո՛չ հանդերձեալին մէջ (Մտք. 12.33):

Քրիստոս այս աշխարհին մէջ ոչ ոքի իշխանութիւն տուած է ներելու հայհոյողին: Միւս աշխարհին մէջ եւս ոչ ոք կը համարակի բարեխօսել՝ ո՛չ հրեշտակները ո՛չ ալ սուրբերը, այլ՝ աշխարհաստեղծ բերնի անէծքներով դեւերուն հետ գեհեմի անշիջանելի հուրը կ'երթայ: Իսկ այս կեանքին մէջ այնքան ատեն, որ կենդանի է բոլոր սուրբերը կը նգովեն այնպիսին: Աստուածախօս եւ մեծ մարգարէն Մովսէս նգոված է հայհոյողը՝ իր ամբողջ ունեցածով եւ նիստ ու կաղով: Նոյնը ըրած են բոլոր սուրբերը: Արդարեւ, ո՞վ չի նգովեր Աստուծոյ Աթոռին հայհոյողն ու գայն դողացնողը:

ԺԱՍԿՈՉ



Բարդ մառ մըն է, որ կազմուած է ժամ + կոչ բառերով եւ կը նշանակէ եկեղեցի կանչող, եկեղեցի հրաւիրող:

Վաղ ժամանակներուն երբ եկեղեցւոյ ժամերգութիւնը պիտի սկսէր, ժամկոչը մուկնախօսի նման գիւղի փողոցները կը շրջէր եւ ժողովուրդը եկեղեցի կը հրաւիրէր աղօթելու համար: Ան երգածայն կը յայտարարէր ըսելով «Ժամ է պաշտել զՏէր» (Տէրը պաշտելու ժամն է):

Հետզհետէ այս սովորութիւնը տեղի տուաւ կոչնակներու դրուածեան, ժամկոչը կոչնակահարութեամբ սկըսաւ ժողովուրդը եկեղեցի հրաւիրել:

Իսկ աւելի ուշ ժամանակներուն, յատկապէս քաղաքներուն մէջ, եկեղեցւոյ զանգակատունէն սփռուող զանգին ղողանջն է, որ սկսաւ ժողովուրդը եկեղեցի հրաւիրել:

Այսօր ժամկոչներուն հիմնական եւ կարեւոր պարտականութիւնն է, որոշեալ ժամուն եկեղեցւոյ զանգը գնորներ, ժամատան ընդհանուր շրջապատէն ներս մաքրութեան հսկել եւ ընթացիք գործերուն սատար հանդիսանալ:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak Նրազ քերք



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՂՑԵՐՈՒՄ ԵՌԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՂՅՍ (Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021

ԹԻԻ 36

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀԱՄԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 10. 12-19: Բ.Կր. 2.12-3.3:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՐԿՈՍ 6.30-44

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՐԿՈՍ 6.30-44

Առաքեալները վերադարձան Յիսուսի մօտ եւ անոր պատմեցին, ինչ որ կատարեցին եւ սորվեցուցին:

Յիսուս անոնց ըսաւ. «Եկէ՛ք երթանք ամառի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը կը հանգչինք», որովհետեւ ժողովուրդէն շատերուն երթալուն պատճառով ուտելու իսկ առիթ չէին ունեցած:

Հետեւաբար իրենք առանձին նաւակ առին եւ գացին ամառի վայր մը:

Երբ ժողովուրդը տեսաւ անոնց երթալը եւ գիտցաւ, թէ Յիսուս ալ անոնց հետ է, շրջակայ քաղաքներու բնակիչներէն շատեր ծովեզերքէն վազելով անոնցմէ առաջ հասան անոնց երթալիք վայրը: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ եւ տեսաւ ամբոխը, գթաց անոնց, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու կը նմանէին: Ապա սկսաւ երկարօրէն ուսուցանել անոնց:

Երբ բաւական ժամանակ անցաւ, աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին. «Ամառի տեղ եմք, եւ արդէն բաւական ուշ է. արձակէ ժողովուրդը, որպէսզի շրջակայ ագարակներն ու գիւղերը երթան իրենց համար ուտելիք գնելու, որովհետեւ ուտելիք չունին»: Յիսուս անոնց ըսաւ. «Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք հարցուցին. «Կ'ուզե՞ս, որ երթանք եւ երկու հարիւր դաշեկան հաց գնենք զանոնք կերակրելու համար»: Յիսուս ըսաւ. «Գացէ՛ք, տեսէ՛ք, թէ քանի՞ հաց ունիք»: Աշակերտները ստուգեցին եւ ըսին. «Հինգ հաց եւ երկու ձուկ»: Յիսուս հրամայեց աշակերտներուն, որ ժողովուրդը խումբ-խումբ նստեցնեն դալար խոտին վրայ, եւ անոնք հարիւրական եւ յիսունական հոգիներէ բաղկացած խումբերով նստան: Ապա Յիսուս առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, երկինք նայեցաւ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որպէսզի բաշխեն եւ երկու ձուկերը բաժնեց ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան, եւ ատելած հացի եւ ձուկի կտորները հաւաքելով տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը, միայն այր մարդիկը հաշուած, շուրջ հինգ հազար էր:

**ՆԻԿԻՈՅ Ա. ԺՈՂՈՎՈՅՆ
318 ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ**

Եկեղեցական հայրերու գումարած առաջին տիեզերական ժողովի յիշատակը, տօնի ձևով կը կատարուի հայոց եկեղեցւոյ մէջ, ինչպէս միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակը (Կ. Պոլիս եւ Եփեսոս):

Նիկիոյ ժողովը գումարուեցաւ 325 թուականին, 318 հայրապետներու մասնակցութեամբ, Կոստանդիանոս կայսեր արտօնութեամբ: Ժողովը գումարուելու շարժառիթը Ադեֆուսանդրիացի երեց Արիոսի հետաքրքրութիւնն էր: Արիոս կը ժխտէր Յիսուսի հաւասարութիւնը Հօր՝ Աստուծոյ հետ եւ չէր ընդուներ Յիսուսի Աստուած ըլլալը: Ըստ Արիոսին Յիսուսը պարզապէս գերմարդկային արարած մըն էր:

Նիկիոյ ժողովին Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորիչի կողմէն կը մասնակցէր Արիստակէս եպիսկոպոսը: Քննուեցաւ Արիոսի մոլար ու հերետիկոսական շարժումը, դատապարտուեցաւ անոր վարդապետութիւնը, հաստատուեցաւ ճշմարիտ դաւանանքը եւ կազմուեցաւ «Հաւատոյ հանգանակ»-ը:

Նիկիոյ հանգանակը աւելի նոխացած ձևով կ'ըսուի եկեղեցւոյ մէջ՝ պատարագի ընթացքին, աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետ: Հաւատամքի բովանդակած կէտերը իւրաքանչիւր քրիստոնեայի համար քրիստոնէական հաւատքի եւ դաւանութեան բանաձևերն են:

Հաւատամքը կը բովանդակէ Աստուծոյ, Որդւոյ, Ա. հոգւոյ, եկեղեցւոյ, Մկրտութեան, մեղքի, մեղքներու յարութեան, յաւիտենական կեանքի, վերջին դատաստանի, երկինքի թագաւորութեան եւ հոգիներու անմահութեան մասին քրիստոնեաներու ունեցած հաւատքն ու դաւանութիւնը:

Նիկիոյ, ինչպէս նաեւ միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակի օրը եկեղեցւոյ մէջ կ'երգուին հայրապետներու նուիրում շարականներ, ուր անոնց ներքոյը հիւսուած է, որպէս հաւատքի հիմքերը հաստատողներ:

Ս. ՀՈԳԵՒՈՐ ԶՕՐԱՆԱԼՈՒ ԱՂՕԹՔ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք թեպի եւ կը խնդրենք, մարդասէր Տէր: Լսէ՛ մեզ, ո՛վ Աստուած, մեր Փրկիչը. ականջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի զուր տեղ չյոգնինք, այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածապաշտութեան պտուղ նկատէ՛: Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ քու ողորմութեամբդ հատուցանէ՛ մեզի, առատապէս: Զու ամենապօր աջիդ հովանիին տակ ծածկէ՛ մեզ, եւ Սուրբ հոգիիդ պարտութեամբը պօրացու՛ր մեզ, ո՛վ Տէր: Աչքի բիբի պէս պահէ՛ մեզ եւ քու բարերարութիւնդ ցոյց տուր մեզի, որպէսզի քու սուրբ անունդ գովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնջենաւոր փառաբանութեամբ քու փառքը կը հիւսեն բարձունքներուն մէջ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

**ԹԵՐԱԿԱՐԱՏՈՒԹԻՒՆՔ ԱՐԳԵԼՔ
ՄԸՆ Է, ՈՐ ԱՍՏՈՒՂԾ ԳՈՐԾԷ ՄԵՐ
ԿԵՂՆՔԻՆ ՄԷՋ**

«Յիսուս կոյրին ձեռքը բռնելով՝ զայն գիւղէն դուրս հանեց, թուքով թրջեց անոր աչքերը եւ ապա ձեռքով դպաւ անոր աչքերուն» (Մր. 8.23): Ինչո՞ւ Յիսուս Բեթսայիդայէն դուրս հանեց կոյրը զայն բժշկելէ առաջ. որովհետեւ ան արժանի չգտաւ, որ Բեթսայիդան ականատես վկան ըլլար նման հրաշքի մը, քանի որ թերահաւատներով լեցուն գիւղ մըն էր (Մտթ. 11.21):

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ
ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ**

Միրելի եղբայր եւ քոյր, անհաւատութիւնը կամ թերահաւատութիւնը կը կաշկանդէ Աստուծոյ գործունէութիւնը մեր կեանքին մէջ: Աստուած իր հրաշքները չի գործեր մեր կեանքին մէջ՝ եթէ երբեք թերահաւատ կամ անհաւատ ենք: Մարկոս Աւետարանիչ խօսելով Նազարէթ քաղաքին մասին՝ կը հաստատէ, թէ «Յիսուս չկրցաւ ռեւէ հրաշք գործել հոն! (Մր 6.5-6), եւ ինչո՞ւ, որովհետեւ անհաւատ մարդիկ էին Նազարէթի բնակիչները: Ուստի, հեռու մնանք թերահաւատութենէն, եթէ երբեք կ'ուզենք ականատես վկան ըլլալ Աստուծոյ մեծամեծ գործերուն:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

**ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՎ ՊԱՏԱՍԽԱՆԵ
ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ,
Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 34**

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեմ անոր օրներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ: Տէրն է իմ պարծանքս: Թող տառապեալները լսեն եւ ուրախանան: Ինձի հետ Տէրը փառաբանեցէք, միասնաբար անոր անունը փառաբանեցէք: Ես Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պատասխանեց, զիս ազատեց բոլոր վախերէս: Տիրոջ մօտեցէք, որպէսզի ուրախութեամբ ճառագայթէք, եւ յուսախաբ չէք ըլլար բնաւ: Ես՝ տառապեալս՝ Տիրոջ դիմեցի, եւ անկկա խնդրանքս լսեց, զիս ազատեց բոլոր նեղութիւններէս: Տիրոջ հրեշտակը աստուածավախ մարդոց կողքին պահակ կը կանգնի, եւ փորձանքներէն զանոնք կ'ազատէ:

Ճաշակեցէք եւ տեսէք, թէ ի՞նչ քան քաղցր է Տէրը: Երանի՛ անոր, որ Տիրոջ կ'ապաւինի: Տիրոջ երկիւղ ունեցէք դուք՝ ո՛վ սուրբեր: Անոր երկիւղ ունեցողները ո՛չ մէկ բանի կարօտ են: Հօրսագոյն մարդիկն իսկ կարօտութեան եւ անօթութեան կրնան մատնուիլ, սակայն Տիրոջ դիմողները բանի մը կարօտ պիտի չմնան:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԴԱՆՔ